

ԱՂԵՐՍԱՆՔ ՊԱՐՍԿԱՀԱՅԻ.

Պարսկահայ եմ, միշտ խնդրեմ՝ օգնէ դու մեզ Տէր Աստուած,

Պանդուխտ ուրիշ խորշերում մի օր կաննա մեզի այց:

Եւրոպացի մեր եղբարց ռոբորմուծիւն արեղիր,

Տեսակ տեսակ ուսմունքներ նորանց առատ տվեցիր:

Ինչ արեցին մեր նախնիք որ մեզմէ փախաւ բարին,

Իւր առատօրէն պարգեւը էլ չի տալի մեր Հային:

Հին ժամանակ շատ կ'տար, — բայց բաժնաս թէ որին,

Եղած էր նա սիրելի նախնի մեր Հայկայ քաջին:

Գարձեալ կարող եմք լինել նորան սիրելի, ինչոյ,

Վարժարաններն ծաղկին՝ մանկունք լի ուսմով:

Ձի դանդաղէն հետ մնան՝ հետեւին նորա ջանքով,

Յայնժամ բարին մեր մէջն կ'ընակի միշտ սիրով:

Տեսնես արդեօք էլիւնի՞, նորան կցանկային մեզմից,

Թէ յօժարեն կստանան բաժին Հայերն Պարսից:

Յայնժամ անհամբեր սրտով կծայնեմ ես այս տեղից,

Առէք, եղբարք, դուք ձեզ մաս՝ մեզ շատ հարկ է նորանից:

Ո՞վ հայրենակից եղբարք մեռ ձեռքի տուած ելնեմք,

Բարերարէն օգնութիւն ուղիղ սրտով թող մաղթեմք:

Մեզ համար մի փրկութիւն թէ ուզենամք որ զանեմք,

Նոր ժամանակիս համար ուրիշ լեզուներ սովորեմք:

Մէջնունի պէս սիրահար ճափառեմ Պարսկահայ եմ,

Պտըտելով միշտ կերպեմ ազգի միջումն նոր եմ:

Չիկայ մի մարդ հարցանէ եւ իմանայ թէ ինչի՞

Բժշկեանցն վառուած է ջերմ սիրով Հայաստանի:

Ի ԹԵՆԵՐԱՆ:

ԱԶԳԱՅԻՆ

Հետագայ յօդուածը թէպէտ անկ եւ հարկէր ուղղել ուղղակի Մեզու Հայաստանի լրագրոյն եւ ի նմին հրատարակել, սակայն Մեծարգոյ Յօդուածագրին նամակէն կ'իմացուի՝ զի Մեզու խմբագրութիւն նոյնութեամբ հրատարակելը զլացեր է (աւելի վերջին պար-

բերութեանցն համար) եւ Արարատայ խմբագրութիւն ղիջանելով համալուր գրասէրին թախանձագին խնդրանաց՝ եւ ահա պարտաւորուած է ինչպէս ի վերայ խոստով՝ անկողմնակալութեամբ արժան համարեցաւ հրատարակել ամսագրոյս մէջ: